

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/2

8 հոկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Էյ Ջի Էն» ՍՊԸ 24.08.2013 թ-ի գանգատը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 27.06.2013 թ-ի թիվ 2121790 ստուգման ակտի դեմ:

«Էյ Ջի Էն» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 25.05.2013 թ-ին կազմված թիվ 2212533 Արձանագրության /այսուհետ՝ Արձանագրություն/ համաձայն «հարկային տեսուչ Արտաշես Մելքոնյանի կողմից 25.05.2013 թ-ին ժամը 20:25 ք.Երևան, Ազատության հր. հարող այգու Սայաթ-Նովա պող. հատ. տար. հասցեում գտնվող «Էյ Ջի Էն» ՍՊԸ-ին պատկանող բացօթյա սրճարանից կատարվեց հսկիչ գնում 800 դրամի չափով՝ 2 հատ մաստակ <Օրբիտ> 1 հատը 400 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով /կամ պլաստիկ քարտի միջոցով/: Գանձապահ Նարինե Նալբանդյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ, իսկ մատուցող էդգար Թադևոսյանը համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 20:26-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 473186 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը 800 դրամը, ժամը 20:27-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 20:27 նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 800 դրամ ընդհանուր գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքով սահմանված կարգով»:

Այնուհետև, « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 05.06.2013 թ-ի թիվ 2121790 հանձնարարագրի հիման վրա իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 27.06.2013 թ-ին կազմվել է թիվ 2121790 Ակտը /այսուհետ՝ Ակտ/, որի համաձայն Ընկերությունը տուգանվել է 600.000 դրամի չափով: Որպես տուգանելու հիմք նշվել է « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 23.05.2013 թ-ի թիվ 2212533 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2212533 արձանագրությամբ նշված խախտումը:

Նման պայմաններում գտնում ենք, որ ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որով խախտվել են Ընկերության իրավունքները և օրինական շահերը:

Փաստական հիմնավորումները.

Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 25.05.2013 թ-ին կազմված թիվ 2212533 Արձանագրությամբ նշված ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը անհիմն է, քանի որ իրականում ՀԴՄ կտրոնը տրամադրվել է: Հարկային տեսուչը մոտենալով գանձապահին վերջինիցս վերցրել է ՀԴՄ սարքը և ինքնուրույն՝ առանց համապատասխան պաշտոնատար անձի թույլտվության, կատարել է դրա հետ գործողություններ:

Մուտք անելով 800 դրամ գումարը ՀԴՄ՝ ՊԵԿ աշխատակիցն ըստ էության անհիմն ավելացրել է Ընկերության իրացման ծավալները:

Մինչ 800 դրամ արժողությամբ 2 «Օրբիտ» մաստակ գնելը, ՊԵԿ աշխատակիցների կողմից ևս գնումներ են կատարվել ընդհանուր 12.000 դրամի չափով, որի համար վերջիններիս տրամադրվել է ՀԴՄ կտրոն:

Մինչև <Z> հաշվետվությունը հանելը ՊԵԿ աշխատակիցների կողմից չի ստուգվել դրամարկղում առկա դրամական միջոցները և արդյունքում համեմատություն չի արվել հաշվետվության մեջ նշված և փաստացի առկա գումարների միջև, արդյունքում անհիմն եզրակացություն անելով, թե իբր գործարքի համար <ԴՄ կտրոն չի տրամադրվել:

Այն փաստերը, որ ՊԵԿ ներկայացուցիչն առանց համապատասխան թույլտվության է վերցրել <ԴՄ սարքը, ինքնուրույն է կատարել որոշակի գործողություններ դրա հետ, ապացուցվում են գանձապահի մոտ տեղադրված տեսախցիկների ձայնագրության վերծանումով, որի օրինակը կցվում է գանգատին:

Իրավական հիմնավորումները.

1. Տվյալ պարագայում ակտը կազմվել է հիմք ընդունելով կեղծ տեղեկությունների հիման վրա կազմված Արձանագրությունը, հետևապես <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ/ կետի համաձայն ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

2. ՀՀ Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <ԴՄ շահագործման կանոնների 22-րդ կետի համաձայն, պատասխանատու անձին արգելվում է կողմնակի անձանց թույլատրել աշխատել <ԴՄ-ի հետ՝ բացառությամբ իրավասու ղեկավար անձի թույլտվությամբ՝ հարկային տեսչության աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետների:

Այս նորմից հստակ երևում է, որ հարկային տեսչության աշխատողն իրավունք չունեք առանց իրավասու ղեկավար անձի թույլտվության վերցնել և աշխատել <ԴՄ-ի հետ:

3. Հարկային տեսուչները խախտել են նաև ՀՀ Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <ԴՄ շահագործման կանոնների 20.1 կետի պահանջները, համաձայն որի հարկային մարմնի կողմից իրականացվող հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա, ապրանքային հատկանիշները:

4. ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.3 կետում նշված են հսկիչ գնում իրականացնելու համար հիմք հանդիսացող հանգամանքները: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ստուգման հանձնարարագրում պետք է նշվեն ստուգման իրավական հիմքերը:

Տվյալ պարագայում հսկիչ գնում իրականացնելու հանձնարարագրում նշված չեն եղել օրենքի հավելվածով սահմանված հիմքերը, հետևաբար հանձնարարագիրն անվավեր է, ինչպես նաև դրա հիման վրա ստեղծված հիմքերը, քանի որ ստեղծվել են օրենքի խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել և վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ 27.06.2013 թ-ի թիվ 2121790 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Էյ Զի Էն> ՍՊԸ ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կնետրոնի ՀՏ ընթացիկ հսկողության թիվ 1 բաժնի հարկային տեսուչներ Սարգիս Սահակյանը և Արտաշես Մելքոնյանն այցելել են <Էյ Զի Էն> ՍՊԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) պատկանող ք.Երևան, Ազատության հրապարակին հարող այգու և Սայաթ-Նովա պողոտայի հատ. տար. հասցեում գործող սրճարան, որտեղ ազատ սեղան չի կանգնելու պատճառով նստել են իրենց ծանոթների սեղանի

շուրջ: Որոշ ծամանակ անց վերջիններս վճարել են իրենց կողմից պատվիրված ապրանքների դիմաց և հեռացել են: Ընդ որում հարկ է նշել, որ տեսուչների ծանոթների կողմից վճարված գումարը հսկիչ գնման ուսումնասիրության հետ որևէ առնչություն չի ունեցել: Նշված անձանց հեռանալուց հետո հարկային տեսուչներն իրականացրել են հսկիչ գնում: Մասնավորապես, պատվիրվել է 2 հատ <Օրբիտ> տեսակի մաստակ՝ գումարով 800 դրամի չափով, որոնք մատուցվել են բացված վիճակում, սայան համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի ներկայացվել: Հարկային ծառայողները մոտեցել են մատուցողին, ներկայացրել են ծառայողական վկայականները և հարցրել, թե ով է ընկերության տնօրենը, մատուցողը ներկայացրել է Մարինե Խոջաբեկյանին որպես ընկերության տնօրեն: Հարկային տեսուչները Մարինե Խոջաբեկյանին ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը ծանոթացման, սակայն վերջինս հրաժարվել է հանձնարարագիրը ստորագրել, քանի որ ըստ Մարինե Խոջաբեկյանի խոսքերի, դեռ չի նշանակվել տնօրեն և զանգահարել է ընկերության տնօրեն Տիգրան Կաջոյանին: Տիգրան Կաջոյանը հայտնել է, որ քաղաքից բացակայում է և հարկային տեսուչներին թույլատրել է ՀԴՄ-ից դուրս բերել <Z> հաշվետվություն և վերականգնել չմուտքագրված գումարը, քանի որ աշխատակիցները լավ չեն տիրապետում <Z> հաշվետվություն դուրս բերման կարգին:

Հարկային տեսուչների կողմից դուրս է բերվել <Z> հաշվետվություն, վերագանգնվել է չմուտքագրված գումարը և նորից դուրս է բերվել <Z> հաշվետվություն: Այնուհետև կազմվել են ընկերության տնօրենի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայելու մասին և հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ արձանագրություններ, որոնք էլ փոստային ծառայության միջոցով ուղարկվել են ընկերության իրավաբանական և գործունեության հասցեներով:

Ինչ վերաբերվում է գանգատում նշված այն պնդմանը, որ չի կատարվել գնված մաստակների ետ վերադարձ, ապա այդ կապակցությամբ նշվեց, մաստակները մատուցվել են բացված վիճակում: Այսինքն, գնված մաստակների ապրանքային հատկանիշների փոփոխման հետևանքով անհնարին է եղել դրանց ետ վերադարձը:

Հանձնաժողովի անդամի ընկերության ներկայացուցչին ուղղված հարցին, թե արդյոք ուսումնասիրությունն իրականացրած անձանց ծանոթների կողմից վճարված գումարի մեջ, որի դիմաց տրվել է ՀԴՄ կտրոն, ներառված է նաև գնված մաստակների արժեքը, հնչեց պատասխան, որ տվյալ պահին այդ հարցին ինքը չի կարող պատասխանել:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի <ա> ենթակետով սահմանված կարգով:

Հանձնաժողովի 10.09.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, գանգատը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ, սակայն սույն որոշումը ընդունելու դրությամբ չի ստացվել որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, այն դեպքում, երբ Կարգի 12-րդ կետի համաձայն. <Խորհուրդն իր նիստերի ընթացքում քննարկում է հանձնաժողովի ներկայացրած յուրաքանչյուր գանգատի

փաթեթը և խորհրդի նիստերի անցկացման վայրում դրա մուտքագրվելուն հաջորդող տասն օրվա ընթացքում իր եզրակացությունը ներկայացնում կոմիտե:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրացել է Կարգի 14-րդ կետով սահմանված որոշում ընդունելու համար << օրենսդրությամբ սահմանված ժամկետները, սույն որոշումն ընդունվում է առանց Գանգատարկման խորհրդի եզրակացության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

